ԵՊԲՀ ՔՈՒԵՋԻ «ԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների մասնակցություն 50 (96 %)

Հարցմանը մասնակցել է 50 ուսանող (96%), ինչը թույլ է տալիս կատարել հիմնավորված գնահատականներ:

1. Նշեք որ կուրսում եք սովորում



2. Ձեր միջին առաջադիմությունը՝



3. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկը ցույց է տալիս, որ գերակշռում են բարձր գնահատականները (4 և 5 միավոր):
Սա նշանակում է, որ տեսական բաղադրիչը ծրագրում կազմակերպված է բավարար մակարդակով:

4. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկում նկատվում է դրական գնահատականների գերակշռություն, սակայն համեմատաբար ավելի շատ են ցածր գնահատականները (1և 2 միավոր), քան տեսական գիտելիքների դեպքում է:
Սա ցույց է տալիս, որ գործնական հմտությունների բաղադրիչն ունի բարելավման կարիք:
Այս արդյունքը համընկնում է ուսանողների առաջարկների հետ՝ պրակտիկայի ավելացման պահանջով :

5. **Մասնագիտական առարկաների ուսումնասիրման ժամանակ բավարար չափով հասանելիություն ունեցել եք անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ հասանելիություն չեմ ունեցել, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկից երևում է գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի հասանելիության ոչ լիարժեքություն որոշ խմբերի համար:

6. **Որքանով եք բավարարված անհրաժեշտ գրականության հասանելիությամբ** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկում գերակշռում են դրական գնահատականները, ինչը վկայում է, որ ուսանողները հիմնականում բավարարված են անհրաժեշտ գրականությամբ:

7. **Որքանով լիարժեք** և **արդյունավետ են օգտագործվում դասաժամերը դասախոսների կողմից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ ոչ լիարժեք և անարդյունավետ, 5-ը՝ լիարժեք և արդյունավետ)



Գրաֆիկը ցույց է տալիս , որ դասախոսների կողմից դասաժամերի կազմակերպումը գնահատվում է արդյունավետ:

8. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված հանրակրթական առարկաների դասավանդման որակից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



9. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված մասնագիտական առարկաների դասավանդման որակից (**գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ**)**



8րդ և 9րդ գրաֆիկներից հետևում է, որ մասնագիտական առարկաների գնահատականներն ընդհանուր առմամբ ավելի բարձր են, քան հանրակրթական առարկաներինը:

Սա ևս մեկ անգամ հաստատում է, որ ուսանողները առավել կարևորում են մասնագիտական ուղղվածությունը:

10. **Ինչը** և **ինչպես կփոխեիք ուսումնական գործընթացը առավել լավը** և **արդյունավետ դարձնելու համար** (եթե առաջարկը վերաբերվում է կոնկրետ առարկային/ամբիոնին, նշեք առարկայի անվանումը , խնդիրը և/կամ առաջարկությունը):

Սույն հարցին պատասխանել է 10 ուսանող, որոնց պատասխաններն առանց խմբագրման ներկայացված են հավելված 1ում

Ուսանողների կարծիքների ընդհանրացում

(նաև ուսումնական գործընթացի բարելավման առաջարկներ)

Ուսանողների մեծ մասը կարևորում է՝

- Հիվանդանոցային պրակտիկայի կազմակերպումը և դրանց քանակի ավելացումը
- Ավելի շատ գործնական դասընթացների ներդրումը
- Դասացուցակի և ցիկլերի վերաբերյալ տեղեկատվության ավելի վաղ տրամադրում
- Ցիկլերի տևողության երկարացում (մեկ շաբաթից երկու շաբաթ)
- Դեկանատի աշխատանքի բարելավում

Եզրակացություն

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ «Բուժական գործ» կրթական ծրագիրը ընդհանուր առմամբ արդյունավետ է և բավարարում է ուսանողների մեծ մասի ակնկալիքները:

Առավել արդյունավետ են գնահատվել մասնագիտական և կլինիկական ուղղվածության, ինչպես նաև բժշկական հիմքային առարկաները: Սա վկայում է, որ ծրագրի մասնագիտական բաղադրիչը համապատասխանում է ուսանողների կարիքներին և ապագա մասնագիտական պահանջներին:

Առաջարկություններ կրթական ծրագրի զարգացման համար

1. Կլինիկական և գործնական ուսուցման համակարգային բարելավում

Կրթական ծրագրի առաջնահերթություններից մեկը պետք է լինի գործնական և կլինիկական ուսուցման բաղադրիչի ընդլայնումը: Առաջարկվում է մեծացնել հիվանդանոցային պրակտիկաների, կլինիկական ցիկլերի և հմտությունների զարգացման գործնական դասընթացների ծավալը՝ ապահովելով ուսանողների առավել ակտիվ ներգրավվածություն իրական մասնագիտական միջավայրում:

2. Նյութատեխնիկական բազայի արդիականացում և ուսումնական միջավայրի զարգացում

Անհրաժեշտ է շարունակաբար արդիականացնել լաբորատոր և կլինիկական ուսուցման համար նախատեսված նյութատեխնիկական բազան՝ ապահովելով ժամանակակից սարքավորումների, գործիքակազմի և ուսումնական նյութերի բավարար հասանելիություն: Սա հնարավորություն կտա բարձրացնել գործնական ուսուցման արդյունավետությունը և համապատասխանեցնել այն ոլորտի ժամանակակից պահանջներին:

3. Ուսումնական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության բարձրացում

Առաջարկվում է կատարելագործել ուսումնական գործընթացի պլանավորման և կառավարման մեխանիզմները՝ ապահովելով դասացուցակների, կլինիկական ցիկլերի և պրակտիկաների ավելի համակարգված և կանխատեսելի կազմակերպում: Տեղեկատվության ժամանակին տրամադրումը և ուսումնական ծանրաբեռնվածության հավասարակշռված բաշխումը կնպաստեն ուսանողների ուսումնառության արդյունավետությանը:

4. Դասավանդման մեթոդաբանության արդիականացում և դասախոսական ներուժի զարգացում

Խորհուրդ է տրվում խթանել դասավանդման ժամանակակից, ուսանողակենտրոն և ինտերակտիվ մեթոդների կիրառումը, ինչպես նաև ապահովել դասախոսների շարունակական մասնագիտական զարգացումը:

5. Կրթական ծրագրի մասնագիտական ուղղվածության և աշխատաշուկայի հետ կապի խորացում

Կրթական ծրագրի զարգացման շրջանակում նպատակահարմար է շարունակաբար ամրապնդել մասնագիտական բաղադրիչը՝ ապահովելով ուսումնական ծրագրի սերտ կապը առողջապահական համակարգի պահանջների և աշխատաշուկայի կարիքների հետ: Սա կնպաստի շրջանավարտների մրցունակության և մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը:

Հավելված 1

Ստորև ներկայացվում է 10 ուսանողների պատասխաններն առանց խմբագրման

1. Գնալ պրակտիկայի
2. Գնալ հիվանդանոց պրակտիկայի
3. Ուղարկել դասացուցակը և ցիկլերի հետ կապված ինֆորմացիան ավելի շուտ
4. Դեկանատի աշխատանքը կվերափոխեի
5. Ես կփոխեյ ցիկլերը մեկ շաբաթանոցների տեղ երկու շաբաթանոց
6. Էլեկտիվ առարկան տեղափոխել 7-8 դասաժամին
7. Գնալ պրակտիկայի
8. Կավելացնեի պրակտիկաների քանակը քանի որ շատ երկար հերթեր են և ամբողջ խումբը հազիվ է հասցնում մասնակցել պրակտիկաների
9. Ավելի շատ մասնագիտական առարկաներ, գործնական դասընթացներ
10. հաշվի առնելով մեր առջև դրված խնդիրները և դրանց լուծման համար անհրաժեշտ միջոցները, ես կարծում եմ որ ոչինչ փոխելու կարիք չկա